«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 2
15.10.2024թ.

1. 2024-2025 ուսպարվա առաջին կիսամյակում ՀԱԱՀ անվանական կրթաթոշակառուների հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուներին.

- Տնտեսագետ Վահան Տոտոմյանցի (Թոթոմյանց) անվան կրթաթոշակ տրվում է Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի ԱԲՖ - 2-րդ կուրսի մագիստրանտ Մարիամ Խաչատուրի Շահինյանին և առկա ուսուցման համակարգի ԱԲՖ-2-րդ կուրսի մագիստրանտ Մարգարիտա Սամվելի Սահակյանին:
- Ակադեմիկոս Սերգեյ Մովսեսյանի անվան կրթաթոշակը տրվում է Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ԲԺ-4-րդ կուրսի ուսանող Երվանդ Սամվելի Արսենյանին և առկա ուսուցման բակալավրիատի ԲԺ-4 -րդ կուրսի ուսանող Անդրանիկ Միհերի Ռսյանին:
- Կոնյակագործ Մարգար Սեդրակի Սեդրակյանի անվան կրթաթոշակը տրվում է Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի ՍՄ-2-րդ կուրսի մագիստրանտ Անի Ռաֆայելի Ահարոնյանին և առկա ուսուցման համակարգի ՍԱ-2-րդ կուրսի մագիստրանտ Էլլա Միհերի Դաշտոյանին:

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորմամբ ՀԱԱՀ-ում իրականացվող գիտահետազոտական, դրամաշնորհային ծրագրերի տարեկան և ամփոփիչ հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ

2.1. Հաստատել 22IRF-10 ծածկագրով «Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում. բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրության ամբողջական մոտեցում» գիտական թեմայի ընթացիկ հաշվետվությունը և երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ Աննա Ավետիսյան):

2.2. Հաստատել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով ՀԱԱՀ-ում 2022-2024թթ. իրականացված ստորև ներկայացվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները և երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար.

- 21T-4C045 ծածկագրով ‹‹Կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանի Հանրապետության արիդ և սեմիարիդ տարածաշրջանների բնական

կերհանդակների խոցելիության գնահատում և դրանց կառավարման վերաբերյալ միջոցառումների մշակում›› գիտական թեմա (թեմայի ղեկավար Կարինե Սարգսյան):

- 21T-1A047 ծածկագրով «Ուռուցիկ ոչ գծայնությամբ որոշ ինտեգրալ հավասարումներ» գիտական թեմա (թեմայի ղեկավար Աղավարդ Խաչատրյան):

- 21T-4C249 ծածկագրով «Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային կարգերի վերագնահատման մեթոդիկայի մշակումը և հողային ռենտայի հաշվառումը» գիտական թեմա (թեմայի ղեկավար Պարույր Էֆենդյան):

- 21T-4C050 «Սինթետիկ պոլիմերների օգտագործմամբ հացահատիկի բերքատվության բարձրացման միջոցառումների համակարգի մշակում Հայաստանի Հանրապետության անջրդի երկրագործության պայմաններում» գիտական թեմա (թեմայի ղեկավար Գայանե Ավագյան):

- 21T-1D165 ծածկագրով «Հետերոցիկլերի ածանցյալների սինթեզը միկրոալիքային (ՄԱ) և գերձայնային (ԳՁ) ճառագայթման ազդեցության տակ» գիտական թեմա (թեմայի ղեկավար Էմմա Ղազարյան):

- 21T-4D086 ծածկագրով «Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսների in vitro վիրուսազերծ հավաքածուի ստեղծում» գիտական թեմա (թեմայի ղեկավար Գայանե Մելյան):

- 21T-4C087 ծածկագրով «Գյուղատնտեսական մշակաբույսերի կաթիլային ոռոգման ռեժիմի և տեխնոլոգիաների ուսումնասիրություն» գիտական թեմա (թեմայի ղեկավար Գուրգեն Եղիազարյան):

3. ՀԱԱՀ Միջազգային կապերի դեպարտամենտի 2023-2024 ուստարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

4. Ծաղկանուշ Հովիկի Միրզոյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

1. Ծաղկանուշ Հովիկի Միրզոյանին ձևակերպել հայցորդ ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնում:

2. Թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցությունը և կառավարման քաղաքականությունը» վերնագրով՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

3. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սերգեյի Ավետիսյանին:

5. Դավիթ Զավենի Մարկոսյանի՝ «Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ Դավիթ Զավենի Մարկոսյանի՝ «Շրջանաձև բիզնես մոդելների ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» վերնագրով, Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցող ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ